ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Գ» ԵՆԹԱԿԵՏԻ, 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2.1-ԻՆ ԵՎ 2.2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, 52.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ՝ ՍՈՒՅՆ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ (30.01.2026 Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ) ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի, 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դիմողի ներկայացուցչի՝ սույն գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ կրկին ներկայացրած (30.01.2026 թ. Սահմանադրական դատարան մուտքագրված) միջնորդությունը, **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումներով և հաշվի առնելով, որ սույն միջնորդությամբ չի հիմնավորվում գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հիմքերի առկայությունը՝ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետի, 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով դիմողի ներկայացուցչի՝ սույն գործի դատաքննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը, մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

6 փետրվարի 2026 թվականի
ՍԴԱՈ-17